



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵԻՉՈՐՍԵՐՈՐԳ ՏԱՐԻ

1909

№ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՆՆԵՐԻ ԳՐԱՐԱՆ

1909

## ԽԱԻԱՐ ԳԻՇԵՐԻՆ

Կէս զիշերին մերկ արդարութիւնը վեր կացաւ գերեզմաններինց և քալեց դէպի մարդկանց բնակարանները:

Գիւղը լուռ էր ու կծկուած. ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէ լսուած. չէ լսուած նոյնիսկ շների հաշոց կամ վնգոց:

Հորիզոնում չէ փայլում և ոչ մի աստղ. անթափանց, սև խաւարը իջած է զիւղի վրայ, և այդ խաւարը իր ահաւոր սոսկումով ասես մնչեցրել է մարդկանց:

Յրտաշունչ քամի է փչում և մերկ արդարութիւնը դողում, սարսուռւած է ցրտից. նա կուչ եկած քալում է, հաքայլում: Ահա և զիւղը իր բնակարաններով, որոնք նման են լուռ դամբարանների, որոնց տակ թաղնուած են կենդանի-մեռելներ: Նա մտաւ զիւղը և ապաստան է փնտրում իր մերկ մարմինը մի անկիւնում թաղցնելու այս խստաշունչ բուքից:

Ս.ռաջին հանդիպած դուռը լծակեց նա իր սառած, ոսկրոտ մատներով:

— Ո՛վ է, ներսից լսուեց մի խուպտո ձայն:

— Ես եմ, արդարութիւնը, մի ապաստան տուէք:

— Ինչո՞ւ ես շրջում այսպիսի ահաւոր զիշերին:

— Ինչ անեմ, ապաստան չունեմ. երկրի երեսին ամեն տեղ շրջել եմ, տեղ չեմ թողել. որտեղ զնացի՝ հայածեցին մարդիկ. միայն այս զիւղն է, որ չեմ շրջել. բարի եղէք, ձեր չարկի տակ տուէք ինձ ապաստան:

— Ձէ, տեղ չկայ, զնա՛, այսպիսի զիշեր դուռ չեն բաց անի. չէք տեսնո՞ւմ, ինչպէս է տնջում զիշերը:

— Կարծեմ դուք զիւղի հովիւն էր, բարի եղէք, տէր հայր...

— Ձէ, չենք կարող, ամեն մի չարիք ծնւում է էս զիշերին:

— Դուք խիղճ ունի՞ք:

— Ունիմ.

— Զգայո՞ւն:

— Զգայուն:

— Երբ որ խիղճ ունէք, ինչո՞ւ անապաստանին տեղ չէք տալիս:

— Դա խղճի բան չէ, այլ կամքի:

Քահանայի անից հեռանալով՝ խեղճ արդարութիւնը մի քանի դռներ էլ բաղխեց, բայց ոչ որ ձայն չը հանեց. ամենքը քնած էին, գուցէ և արթուն բայց չէին խօսում. ահուելի խաւարից, երկունքով բռնուած սև գիշերի անքոցից՝ սսկել ու քնչուել էին մարդիկ:

Նա մօտեցաւ մի մեծ դռան ու բաղխեց:

— Ո՞վ է, լսուեց մի դողդոջ ձայն:

— Արդարութիւնն եմ, մերկ եմ, տեղ առեք:

— Հեռո՞ւ դնա, այսպէս էս գիշերին ո՞վ է դժուել քո առաջ դուռը բանայ, երբ չար ողիները սկսել են քրքչալ ու ոռնալ:

— Մի անկիւն, ի սէր Ասածոյ:

— Զկա՛յ, չկա՛յ. հեռացի՛ր:

— Այնտեղ դռնէ առէք, որտեղ նստում է ձեր կատուն:

— Ի՞նչ ես վալը ի վերոյ խօսում, ո՞վ է խենթացել քեզ տեղ տալ կամ դուռը բանալ այսպիսի մի գիշեր, երբ սոսկումն է մաղուում երկրի վրայ, անէծք թափուում երկնքից և յաւիտենական նղովք է տարածուում ամենուրէք. եթէ դուռը բանանք, նրանք կը դան և ներս կը սողան քեզ հետ մէկտեղ:

— Մի՛ վախենաք, հաւատացէք, որ ոչ մի բան չի պատահի:

— Դու խնսերս մի ցաւացնի. արդարութիւն չէ ինչ ուզում է լինի, մենք դուռը բաց անողը չենք:

Արդարութիւնն է՛լ չը խօսեց, կանգնեց պատի տակ: Այդ վայրկենին ստուերի նման մէկը անցաւ նրա մօտով ու թակեց դուռը՝ ասելով.

— Բացէք դուռը:

— Ո՞վ է:

— Ես եմ, զարիբի մէկը:

— Ի՞նչ ես ուզում:

— Մի տեղ տուէք:

— Տեղ չկայ, այսպիսի գիշերին դուռը չեն բաց անի:

— Բացէք, ահա ձեզ ոսկի ինչքան կամիք:

Դուռը նույնպիսով բացուեց. հիւրին ներս ընդունեցին:

Մերժուած արդարութիւնը կանգնել էր շէմքում ու լսում էր նրանց խօսակցութիւնը:

Տանտէրը հարցնում էր.

— Ո՞վ ես դու:

— Ա...արդարութիւնը. կակաղելով ասաց հիւրը. — ահա ձեզ

ոսկիները:

Տանտէրը առաւ ոսկիներն ու նորից ասաց.

— Ախր հէնց նոր արդարութիւնը դիպաւ մեր դռան ու գնաց. մենք չընդունեցինք նրան:

— Նա արդարութիւնը չէ եղել, ես եմ ...ութիւնը:

— Ի՞նչը:

— Իսկական արդարութիւնը:

Արդարութիւնը լսեց այդ բոլորը ու էլ չը համբերեց՝ գոռաց դռան ետևից.

— Ես՝ արդարութիւնս այստեղ եմ. ո՞վ է այդ սև հողին, որ ստում է. ասացէք:

— Ներողութիւն, արդարութիւն եղբայր, ա՛խ սատանան տանի, ստութիւն եղբայր, ես եմ, ես: Հա-հա-հա, տեղ չես հարո՞ւմ:

— Լպիրշ անամօթ, չես էլ ամաչում, ծիծաղո՞ւմ ես. ի՞նչու ես ստում, դո՞ւ ես արդարութիւնը: Ինչո՞ւ ես նեղ տեղերում իմ անունը արժարժում, ու ինձ էլ ստութիւն անուանում...

Այդ ժամանակ տանտէրը հչաց.

— Ձէ, սրանք ոսկիներ չեն:

— Ինչ էք ասում, հանգստացրեց նրան հիւրը. գիշերները չի ճանաչում, և երկրորդ էլ այսպէս առատ լոյսի մէջ ոսկին կորցնում է իր փալը. պահեցէք մինչև առաւօտ, տեսէք եթէ ոսկի չէ՛ յետ տուէք ինձ:

— Լաւ. համածայնեց տանտէրը:

Արդարութիւնը գլուխը քորելով հեռացաւ. ճանապարհին

բոլոր պատահած դռները թակեց. ոմանք չէին պատասխանում, ոմանք էլ դալրացած ասում էին. «տեղ չկայ»: Իսկ ոմանք դարձանում էին. «աշխարհում քանի՞ արդարութիւն կայ»:

— Մէկը. պատասխանում էր արդարութիւնը:

— Որ մէկը՝ էլ ինչ ես ուզում. արդէն մէկին ընդունել ենք:

— Ախ, հառաչում էր արդարութիւնն ու հեռանում:

Դողդողալով նա գնում էր ու ինքն իրան խօսում.

— Ամեն տեղ իմ անունով ներս է մտել այդ զարշելին ու ամենքին խարել, ամենքի աչքը կապել, կեղծ ոսկու փայլով կուրացրել և դնացել տների վերի անկիւնում նստել: Խե՛ղճ, խե՛ղճ մարդիկ. ոսկու փայլը...

Ցրտից նրա ատամները չխկչխկացին. էլ չխօսեց նա, շարունակեց քայլել՝ կծկուած ու լուռ: Մերկ, լերկ մարմինը սառչում էր:

Գիւղում խեղճը տուն չթողեց: Բոլորի դուռը բայխեց, աղաչեց խնդրեց՝ ապաստան տուող չեղաւ, այժմ դիւղի եզրին էր հասել, պէտք է դուրս դար գիւղից ու շարունակէր երկրի վրայ իր թափառիկ կեանքը: Մի տուն, միայն մի տուն էր մնացել. նրա դուռն էլ կը թխկացնէր, ապաստան կը խնդրէր. դեռ յոյս ունէր, որ զոնէ այդտեղ ապաստան կտան իրան:

— Թրրխկ, թրրխկ... թակեց դուռը սառած մասներով:

— Հ՞ր, ի՞նչ ես ուզում... գոռաց մի ծայն և վայկենապէս լսուեց որոտ ու փայլատակեց բոց:

Արդարութիւնը ընկաւ գետին՝ թալրաց, քարերը չանգուեց, երեսը քսեց հողին, դալարուեց, օրհասական ցնցումներ արաւ ու լռեց...

Վերջին տունը՝ դիւղի պատաստանատունն էր և արդարութիւնը նրա զոհը դարձաւ:

Երկինքն ու երկիրը դղրդացին, ամպրոպ ու կայծակ, շանթ ու որոտ խառնուեցին իրար. փայլահնների բոցերով մի վայրկեան լուսաւորուեց խաւարը և սպա . ամեն ինչ մթնեց ու անտեսանելի դարձաւ:

Աւերիչ մրրիկը հեծեծալով վազեց տիեզերքի մէջ...

Խենթացած հողմերը ծեծեցին ժալուերի կատարները...

«Ա-ու-ու-ու... առ կաղկանձեցին շները զիլ ոռնոցով:

Մեծ արդարութիւնը մեռաւ այդ խաւար գիշերին՝ արիւննոտուած, բզկաուած ու մերկ...